

ԱՅՍ ԹԻՒՈՎ

Տանկահայ Գաղթաշարժը Եւ Անոնց Դերը Հայաստանի Հանրապետութեան Կազմութեամ Մէջ - Դ., էջ 6



Ազգութեամբ Հայերը Հայաստանի Հանրապետութեան Քաղաքացիութիւն Ձեռք Կը Բերեն Պարզեցուած Կարգով, էջ 4

ՀՅԴ Ծուշիի Առանձնակի գումարտակի ազատամարտիկ Հարմիկ Յովսէփեան պարզեւատրուեցաւ Արիութեան մետալով, էջ 5

Երեւանի Մէջ Յարգանքի Տուրք՝ Արամ Մանուկեանի Յիշատակին, էջ 5

Նախագահ Սարգսեան Այցելած Է Հայրենիքի Պաշտպանի Վերականգնողական Կեդրոն



ՀՕՄ-ի Գանատայի Ծրջանը իր 10 մասնաճիւղերով 10 անկողին կը նուիրէ Հայաստանի Հաշմանդամ Զինուորներու Վերականգնողական Կեդրոնին

Երեւանի Թիւ 1 Հիւանդանոցին մէջ գործող՝ հաշմանդամ զինուորներու վերականգնողական կեդրոնը խիստ կարիքը ունի հիւանդանոցի յատուկ անկողիններու:

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը աշխարհասփիւռ իր միւսուրներու օժանդակութեամբ, ծրագրած է 50 անկողին նուիրել այս կեդրոնին: Ծրագրի նախահաշիւն է 85,000 ամ. տուրք, իսկ իւրաքանչիւր անկողինի ծախսը 1700 ամ. տուրք (փոխադրական ծախսերը ներառելով):

ՀՕՄ-ի Գանատայի Երջանային Վարչութիւնը իր 10 մասնաճիւղերով որոշեց 10 անկողին ապահովել այս կեդ-

րոնին, որ պիտի օժտուի արդիական սարքերով եւ պիտի ունենայ աշխատանոց, ուր աշխատանքի առիթ պիտի ունենան հաշմանդամ զինուորները:

Առ այդ կոչ կ'ուղղենք Գանատայի տարածքին մեր անդամներուն եւ ազգայիններուն, օգնութեան ձեռք երկարելու հայրենիքի մեր սահմանները պաշտպանող եւ ժողովուրդի անվտանգութեան իրենց առողջութիւնն ու ապագան գոհաբերած վերաւոր եւ հաշմանդամ զինուորներու անմիջական օգնութեան այս շատ կարեւոր ծրագրին:

Ձեր նուիրատուութեան վճարագրերը հաճեցէք գրել՝
ARS FOUNDATION անունին

եւ ուղարկել հետեւեալ հասցէին՝
Armenian Relief Society of Canada (ARS) Inc.
3401 Olivar Asselin
Montreal, QC
H4J 1L5

ՀՕՄ-ի Գանատայի Երջանային Վարչութիւնը կու գայ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու բոլոր նուիրատուներուն, որոնք ճգնաժամային այս օրերուն նեցուկ կը կանգնին մեր Հայ Զինուորին:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Ծրջանային Վարչութիւն



2018 PILOT MSRP STARTING FROM \$40,390*

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian





ARZ
fine foods

*Home to
Authentic
Mediterranean Gourmet*





ardziv

արձիվ



Փետրուար 2018

8-րդ տարին ըլլալով ՀՀԴ ԳԵՄ-ը կը կազմակերպէ իր Վանաձորի երկշաբաթեայ ճամբարը: Այս տարի ճամբարին պիտի մասնակցին 9-15 տարեկան 300-է անէլի երեխաներ, որոնք պիտի հետեւին ՀՀԴ ԳԵՄ-ի վարիչներու պատրաստած ամենօրեայ դասընթացքներուն եւ ծրագիրներուն: Այս ամսուան Արծիւը կը բաղկանայ մեր նախորդ ճամբարներուն մասնակցող երկու վարիչներու տպաւորութիւններէն եւ մեր առաջին ճամբարին մասնակցող երկու 10-ամեայ երեխաներու կողմէ գրուած սրտաբուլիս նամակէ մը:

Յիշատակներ ճամբարից (2011)

Ամրան արձակուրդներին, Օգոստոս 1-ից մինչեւ 12-ը ես յաճախել եմ ՀՀԴ-ի կազմակերպած ցերեկային ճամբար: Այդ օրերին ես ձեռք բերեցի նոր ընկերներ եւ շատ կապուեցի մեր դասատուների հետ: Միաժամանակ բոլորս շատ ուրախացանք, երբ ճամբարի փակման օրը նուէրներ ստացանք. դպրոցական պայուսակ եւ գրեական պիտոյքներ: Չնայած նոր ենք բաժանուել իրանցից, ես ու իմ եղբայրը՝ Լեւոնը, արդէն կարօտել ենք ընկեր Յարութին, ընկեր Ալեքին եւ ընկերուհիներին՝ Միրնային, Վանային, Լուռին եւ Դալարին: Մենք անհամբեր սպասում ենք, որ էլի՝ գնանք ու կարօտը առնենք ու էլի՝ ճամբարային տղայ դառնանք: Մենք շատ գոհ եւ շնորհակալ ենք, որ ինձ ու իմ եղբորս սովորեցրիք նոր երգեր: Մենք չգիտէինք Դրոյի եւ «Մշակ բանուոր» երգերը: Այդ երգերը մեզ շատ բան սովորեցրին, մենք ճանաչեցինք մեր ազգի հերոսներին եւ իմացանք, որ մենք իրենց շնորհիւ է, որ ազատ ապրում ենք անկախ Հայաստանում: Օրուայ վերջում ես ու Լեւոնը մեր ճամբարի ղեկավարներին իրենց մեքենայով ճանապարհեցինք դեպի Երեւան, ինչպէս նաեւ նկարուեցինք: Բաժանման պահին շատ յուզուեցինք: Նրանք գրկեցին մեզ ու համբուրեցին ինչպէս շատ հարազատ մարդկանց, նրանց եւ մեր աչքերում արցունքի կաթիլներ երեւացին: Նրանք փոխադարձ սիրոյ եւ նորից հանդիպելու յոյսի արցունքներ էին:

Իմ այս փոքրիկ յուշակտորը ես նուիրում եմ ընկեր Յարութին ու նրա ընկերներին: Մենք հաւատում ենք, որ եկող տարի նորից կը հանդիպենք մեր ճամբարում:

Ընկեր Յարութ ջան, խոստանում ենք, որ մենք եւ մեր ընկերները եկող տարի անէլի աշխոյժ կը լինենք բոլոր միջոցառումների ժամանակ, կը լինենք անէլի լուրջ եւ խելօք: Իսկ եթէ այս տարի մեր չարածրուութիւններով ձեզ մի քիչ զայրացրել ենք, խնդրում ենք ներող լինեք (երեխաներ ենք, չէ՞):

Միշտ ձեզ յիշող՝
Մելս Մելիքեան եւ Լեւոն Գասպարեան

My Camp Vanadzor Experience

I was honoured to have been a volunteer counsellor for AYF Canada's Camp Vanadzor in Armenia. As a 25-year-old, holding a bachelor of environmental studies from the University of Waterloo and having a deep passion for environmental sustainability, I wanted to leave something unique and personal with my treasured motherland.

I communicated with the Armenia Tree Project (ATP) for a chance to collaborate. I had an idea where we would distribute flowers to the children to teach them about the beauty that encompasses our natural environment. I was so happy when this idea became a reality, and especially when we discussed and understood the importance of doing our part to keep our home planet clean and sustainable for future generations.

I had an absolute blast teaching, learning, and growing with the incredible children of my motherland.

Armen Poladian (Cambridge, Ontario)



Տպաւորութիւններս Վանաձորի ճամբարէն

ՀՀԴ Վանաձորի ամառային ճամբարը ինձի համար իւրայատուկ եւ անմոռանալի փորձառութիւն մըն էր: Իբրեւ վարիչ շատ թերազնահատած էինք մեր ունեցած ազդեցութիւնը ճամբարականներուն վրայ: Ամէն ամառու, ճամբարականները մեծ խանդավառութեամբ վազելով կու գային շարուելու՝ պատրաստ դրօշակի արարողութեան, որպէսզի երգեն «Մշակ բանուոր» քայլերգը: Պատանիները մեծ ոգեւորութեամբ, լրջօրէն եւ հետաքրքրութեամբ մտիկ կ'ընէին մեր դասախօսութիւնները եւ կը մասնակցէին աշխատանքներուն՝ առանց առարկութեան: Նոյնիսկ եթէ փորձերը երբեմն դժուար ըլլային, անոնք գնահատելիօրէն կը ջանային կատարել գանոնք: Կազմակերպուած դասախօսութիւններով եւ խաղերով կրցանք ծանօթանալ եւ անմոռանալի կապ հաստատել իւրաքանչիւրին հետ: Մեծ յարգանքով, սիրով եւ գուրգուրանքով կը մօտենային մեզի, կարծես իրենց մեծ եղբայրներն ու մեծ քոյրերը ըլլայինք: Նոյնիսկ ծնողները մեծ ուրախութեամբ եւ գնահատանքով կը դիմաւորէին մեզ: ճամբարի առաջին օրէն իսկ ճամբարականները մեզի կը յայտնէին, թէ չեն ուզեր ճամբարը վերջ գտնէ, եւ վերադառնանք Գանատա: Հոյակապ եւ յատուկ փորձառութիւն մըն էր՝ ներշնչելու եւ ոգեւորելու հայրենիքի մեր սերունդը անխառն հայ մշակոյթով:

Լուի Ջուխաճեան (Մոնթրէալ, Քեպեզ)




**AYF Canada Youth Corps
Camp Vanadzor**

APPLY TODAY!

Send us an email or give us a call for more information, to make a donation, or to request an application:
youthcorps@ayfcanada.org
 647-966-2281



Ազգութեամբ Հայերը Հայաստանի Հանրապետութեան Քաղաքացիութիւն Զեռք Կը Բերեն Պարզեցուած Կարգով

Յունուարի 6-ից դիւրացուել է 18 տարին լրացած երեխաներին ՀՀ քաղաքացիութիւն տալու եւ ՀՀ անձնագիր տրամադրելու ընթացակարգը: ՀՀ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան պետ Մնացական Բիշախչեանն է ներկայացնում փոփոխութիւնները: Նախկինում անձնագիր տրամադրելու համար պէտք է պարտադիր լինէր երկու ծնողների համաձայնութիւնը:

«Եթէ բացակայում է ծնողների փոխհամաձայնութիւնը, երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիութիւն եւ անձնագիր, եթէ նա բնակուած է ՀՀ-ում եւ առկայ է ծնողներից մէկի համաձայնութիւնը: Այստեղ նշանակութիւն չունի, թէ ծնողներից մէկը ՀՀ քաղաքացի է, թէ օտարերկրեայ»:

Մէկ այլ փոփոխութեան համաձայն, ազգութեամբ հայը, եթէ բնակութիւն է հաստատում Հայաստանում, քաղաքացիութեան իրաւունք ունի: Եթէ մինչեւ 18 տարեկան ազգութեամբ հայ երեխայի ծնողները ՀՀ քաղաքացիներ

չեն, սակայն երեխան մշտապէս բնակուած է Հայաստանում, ծնողների համաձայնութեամբ կարող է ստանալ ՀՀ քաղաքացիութիւն:

«Եթէ 16 տարին լրացած է, 16-18 տարեկան հասակում է դիմում անձնագրաւորման, ինքն է ներկայացնում, երկու ծնողները համաձայնութիւն են տալիս: Մինչեւ 16 տարեկան հասակում դիմումը տալիս է մէկ ծնողը, միւս ծնողի համաձայնութեամբ երեխան կարող է ստանալ քաղաքացու անձնագիր»:

Այստեղ, սակայն, հարց է մնում՝ ո՞վ է ազգութեամբ հայը: Ինչպէ՞ս է որոշուած նրա ազգային պատկանելութիւնը: ՀՀ ոստիկանութեան անձնագրային եւ վիզաների վարչութեան պետ Մնացական Բիշախչեանը «Ռատիոլուր»-ի հետ զրոյցում նշեց՝ ում ծնողները կամ նախապապերը ազգութեամբ հայ են կամ ունենան ազգութիւնը հաստատող փաստաթուղթ: Ասում է. «Ազգութեամբ հայը այն մարդն է, ում քաղաքացիութեամբ նշուած է, որ ազգու-


թեամբ հայ է: Կամ նրա հայրն ու մայրը հայ են: Ծննդեան վկայականը բացէք, որտեղ նշուած է, որ ազգութեամբ հայ են»:

Հայաստանի դաղթականութեան ծառայութեան ղեկավար Գագիկ Եգանեանի գնահատմամբ՝ ազգութեան սահմանումը բարդ ու հետաքրքիր եզր է: Գործող օրէնսդրութեան մէջ նշուած է, որ ծագումնաբանութիւնը պէտք է նաեւ հաստատուի մկրտութեան տեղեկանքով: «Որպէս կանոն՝ հիմնուած են հոգեւոր առաջնորդների կողմից տրուած տեղեկանքների հիման վրայ: Բայց դա, ի հարկէ, ամբողջական ցանկը չէ»:

Կառավարութիւնը հաստատել է ազգութեամբ հայ լինելու հանգամանքը հիմնաւորող փաստաթղթերի ցանկը, որտեղ առաջնային պահանջուող թուղթը Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանից կամ հայկական այլ եկեղեցական կառույցներից տրուած մկրտութեան մասին փաստաթուղթն է՝ մկրտուածի կամ նրա ծնողների ազգութեան մասին նշումով: Սակայն եթէ մկրտուած չեն ո՛չ ծնողները, ո՛չ էլ երեխաները, այս դէպքում ինչպէ՞ս պէտք է որոշուի նրանց ազգային պատկանելութիւնը: Այս դէպքում միջազգային իրաւունքի մասնագէտ Սուրէն Սարգսեանը դժուարանում է խնդրի կարգաւորման ճանապարհ մատնանշել: Օրինակ է բերում կիրառութեան ժամանակ շատ հանդիպող դէպքերից: «Երբ մարդիկ, ենթադրենք, բնակուած են երկար տարիներ արտերկրում, օրինակ՝ Լիբանանում եւ հայկական եկեղեցուց վերցնում են տեղեկանք, որպէսզի դիմեն Հայաստանի քաղաքացիութեան համար»:

Իրականում Յեղասպանութիւնից յետոյ շատերն են կորցրել ազգութիւնը հաւաստող հնարաւոր փաստաթղթերը, ինչն էլ դժուարութիւններ է ստեղծել: Նրանք, ովքեր փրկուել են արաբական երկրներում, փաստաթղթերի բացակայութեան պայմաններում, տրուել է տուեալ երկրի քաղաքացիութիւն, չեն կարողացել ապացուցել իրենց հայ լինելը: Ի վերջոյ ազգութեամբ հայ լինելը տեսական խնդիր է՝ յաւելեց միջազգային իրաւունքի մասնագէտը: Նախեւառաջ անհատը պէտք է իրեն ազգութեամբ հայ համարի: «Ծնուել, մեծացել է Միացեալ Նահանգներում, Հայաստանի հետ որեւէ աւելցուելու չի ունեցել, հայկական միջավայրում է չի մեծացել, միայն ազգանունով է հայ, մի քիչ դժուար է գնահատել նա հայ է, թէ՞ ոչ, որովհետեւ բացի հայկական ազգանունից՝ չունի հայկական ինքնութիւն: Այսինքն նաեւ սրանք անհատական մտեցումներ են, որովհետեւ իւրաքանչիւր արտերկրում բնակուող մեր հայրենակից ինքն է որոշում իր հայ լինելը»:

Ծագումով հայ, ազգութեամբ հայ հասկացութիւնները իրաւական չեն այնքան, որքան դրա տակ կան նաեւ բարոյական եւ անձնական մտեցումներ՝ յաւելեց իրաւաբանը:



Voyages HAIG Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Linda Kharaboyan Notaire Notary

Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու ծրագրերը վստահեցէ մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 - 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com therriencouture.com

VIZUALIS optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall Pointe Claire

514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement
Video - Reproduction

647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3
photocrystal@hotmail.com
www.photocrystal.com

Assura Bien inc.

Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենեակ

KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN

Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միլապոլի շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**

RE/MAX RE/MAX 3000 inc. Agence Immobilière

Elie Berberian
Courtier immobilier | Real Estate Broker

**C 514.519.3543
B 514.333.3000**

ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUDDRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOUVREMENT SUR ONGLES NATURELS

Առողջ եղունգներու խնամքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud Montreal, QC H4J 2H6
Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666
krikormar@gmail.com

FIVE STAR ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

CENTUM
Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

SOSIE DERNERSESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road, Unit 204A, Toronto Ontario M2H 3B4

416.662.6650 cell
centum.ca/sosie_demersesian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5
T 514.382.7222
F 514.381.1818
aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական կորիորդատու՝ Ալին Բեքերեճեան

ՀՅԴ Շուշիի Առանձնակի գումարտակի ազատամարտիկ Հարմիկ Յովսէփեան պարգևատրուեցաւ Արիութեան մետալով

Նախագահ Սերժ Սարգսեանի հրամանագրով, Հայոց բանակի կազմաւորման 25-րդ տարեդարձին առթիւ, Հայրենիքի պաշտպանութեան գործին մէջ ցուցաբերած արիութեան - անձնուիրութեան համար ազատամարտիկ, Դաշնակցական Հարմիկ Յովսէփեանը պարգ-ատրուած է Արիութեան մետալով: Այս մասին կը տեղակայէ նախագահի պաշտօնական կայքէջը:



Հարմիկ Յովսէփեան ծնած է Ռաշտ, Իրան: 1983 թուականին կ'անդամակցի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն (ՀՅԴ) կուսակցութեան: 1986-1989 թուականներուն ծառայած է Իրանի բանակին մէջ: 1990 թուականին տեղափոխուած է Հայաստան, ապա՝ Արցախի Շահումեանի շրջան: Իր առաքելութիւնը եղած է մարտական ղեկավարութեամբ մարզումը: ՀՅԴ Շուշիի Առանձնակի գումարտակին հետ մասնակցած է Մարտակերտի, Ղուբաթլիի, Զանգեզուրի, Ֆիզուլիի, Քարվաճառի շրջաններու ինքնապաշտպանական - ազատագրական կռիւներուն: Հարմիկ Յովսէփեան պարգևատրուած է նաեւ Արցախի Հանրապետութեան «Մարտական խաչ» Առաջին աստիճանի շքանշանով:

Երեւանի Մէջ Յարգանքի Տուրքի Մատուցում՝ Արամ Մանուկեանի Յիշատակին

Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր, ներքին գործոց նախարար Արամ Մանուկեանի կիսանդրիին առջեւ 29 յունուարին յարգանքի տուրք մատուցուեցաւ պետական եւ հասարակական գործիչի մահուան 99-րդ տարելիցին առիթով: Ձեռնարկին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան ոստիկանապետ Վլատիմիր Գասպարեան, ոստիկանութեան աշխատակիցները, ինչպէս նաեւ ՀՅԴ գործիչներ, որոնք ծաղկեպսակ եւ ծաղիկներ դրին Արամ Մանուկեանի կիսանդրիին առջեւ:

ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան նշեց, որ Արամ Մանուկեան բացառիկ ազգային պետական գործիչ էր, եւ անոր կեանքը եւ ամբողջ գործունէութիւնը օրինակ է, թէ ինչպիսին պէտք է ըլլայ իր ազգին նուիրուած եւ ծառայող Հայ մարդը:

«Այս տարի ձեռնարկները պիտի ըլլան պետականութեան վերականգնման 100-ամեակին ոգիով. Արամ Մանուկեանը, բնականաբար, այդ հոլովոյթի յառաջամարտիկն ու այդ ամբողջ տոնակատարութիւններուն առանցքային անձնաւորութիւնն է, որ նաեւ կը մարմնաւորէ մեր պետականութեան վերականգնումը: Ան շատ ուսանելի կենսագրութիւն ունեցած է, ուստի այս առիթը պէտք է օգտագործել եւ աւելի լայնօրէն ներկայացնել անոր գործունէութիւնը մեր ժամանակակից սերունդին, թէ ինչպէ՞ս կարելի է ամբողջ կեանքը նուիրել պետութեան եւ ազգին», նշեց Ռուստամեան:

Նախագահ Սարգսեան Այցելած է Հայրենիքի Պաշտպանի Վերականգնողական Կեդրոն

Նախագահ Սերժ Սարգսեան Յունուար 29-ին այցելած է «Հերացի» թիւ 1 հիւանդանոցային համալիրի մասնաշէնք՝ Երեւանի առաջին քաղաքային հիւանդանոցին մէջ տեղակայուած Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կեդրոն, որ ստեղծուած է Երեւանի պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) եւ պաշտպանութեան նախարարութեան համագործակցութեամբ՝ երկրի նախագահին աջակցութեամբ եւ բազմաթիւ բարերարներու ու անհատ քաղաքացիներու կողմէ տրամադրուած միջոցներու շնորհիւ:

Նախագահը պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանի, ԵՊԲՀ-ի նախագահ Արմէն Մուրադեանի եւ շարք մը բարերարներու ընկերակցութեամբ շրջած է վերականգնողական կեդրոնին մէջ, ծանօթացած իր նախորդ այցելութենէն ետք՝ քանի մը ամսուան ընթացքին կատարուած մեծ ծաւալի աշխատանքներուն, զինուոր հաշմանդամներու համար հիմնուած վերականգնողական մասնագիտական կեդրոնի ընթացիկ գործունէութեան ու զարգացման հետագայ ծրագիրներուն: Սերժ Սարգսեան գրուցած է նաեւ կեդրոնին մէջ արդէն իրենց վերականգնողական բուժումը ստացող հայրենիքի պաշտպաններուն հետ:

Համալսարանի նախագահ Արմէն Մուրադեանի հաստատումով՝ կեդրոնը պիտի գործէ իբրեւ ամբողջական վերականգնողական համալիր, ուր զինուորական հաշմանդամներու առողջական հարցերէն բացի պիտի լուծուին նաեւ ընկերային համարկումի, կրթութեան եւ աշխատանքի հարցեր, անկալ յագեցած է գերժամանակակից վերականգնողական սարքերով եւ շրջանին մէջ միակն է իր կարելիութիւններով:

Նախագահը երախտագիտութիւն յայտնած է այս շատ կարեւոր գաղափարը իրականութիւն դարձուցած բոլոր անձերուն, նախ եւ առաջ՝ կեդրոնին մէջ վերականգնողական բուժում ստացող հայրենիքի պաշտպաններուն՝ նուիրումի եւ անմնացորդ ծառայութեան համար:

Հայաստանի Հանրապետութեան Եւ Մայիսեան Հերոսամարտերու 100-ամեակին Նուիրուած Մշակութային Ծաբաթ Սփիւռքի Մէջ

Կը ներկայացնենք Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանի՝ համայնքներուն մէջ Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերու 100-ամեակին նուիրուած մշակութային շաբաթ կազմակերպելու կոչը:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

2018 թուականը աշխարհասփիւռ հայութեան համար նշանակաւոր է Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերի 100-ամեայ յոբելանով, որը Հայոց պատմութեան մէջ ազգային միասնականութեան ամենավառ արտայայտութիւններից մէկն է:

Այն մեր փրկութեան ու վերածննդի տօնն է, որ տուեց մեզ պետականութիւն եւ ճանապարհ բացեց դէպի այսօրուայ Հայաստանի Հանրապետութիւն:

Անահատն է իւրաքանչիւրիս երախտագիտութեան զգացումը Սարգարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսների յիշատակի եւ հանրապետութիւնը կերտողների առաջ, որը պարտաւորուած եւ պատասխանատու է դարձնում ապրողներին՝ պահպանելու նախնեաց ժառանգութիւնը եւ զարգացնելու մեր հայրենիքը:

Հարկւրամեայ հեռաւորութիւնից հայ ժողովուրդը հպարտութեամբ է յիշում իր գաւակների մեծագոյն նուիրումն ու հայրենասիրութեան ներդրումը, իսկ անկախութեան սերունդը, վստահաբար, այդ ժառանգութեան արժանապատիւ հետեւորդն ու պետութիւնը գորացնողն է՝ իր մրցունակութեամբ, խելքով, համարձակութեամբ ու արարումով:

Հայաստանի Հանրապետութիւնում ողջ տարուայ ընթացքում նախատեսուած է տօնին նուիրուած ամենատարբեր միջոցառումների իրականացում, որոնք մեր հաւաքականութեան, պատմական անցած ուղին վերաիմաստաւորելու եւ առաջ նայելու խորհուրդն ունեն իրենց մէջ:

Այս առիթով Հայաստանի Հանրապետութեան սփիւռքի նախարարութիւնը կոչ է անում ձեզ, եթէ նպատակաւոր մարդ եմ, մայիսի 20-28-ը համայնքներում անցկացնել Հայաստանի Հանրապետութեան եւ Մայիսեան հերոսամարտերի 100-ամեակին նուիրուած մշակութային շաբաթ՝ կազմակերպել համերգներ, բանաստեղծութեան տօներ, դասախօսութիւններ, հանդիպումներ, ցուցահանդէսներ եւ այլ միջոցառումներ՝ մասնակիցը դառնալով համահայկական, համազգային նշանակութեան այս տօնակատարութեան:

Շաբաթը կը դառնայ մեր համահաւաք համերաշխութեան իւրօրինակ մի ստուգատես: Թող որ Հայ ժողովուրդը միայն մայիսներ՝ յաղթանակներ տօնելու, յաղթանակի շուրջ համախմբուելու առիթներ ունենայ՝ երբեք ու երբեք չունենալով նոր ապրիլներ»:

ՍԻՐՈՎ՝ ՀՐԱՆՈՒԾ ՅԱԿՈԲԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՓԻՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐ

Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613


RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.

Eddie, Pedro, Joyce Oughourlian

Այցելեցեք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ կայքէջը՝ www.sourphagop.net

ՌԻՄԱԿՆԻՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 3
ՓԵՏՐՈՒԱՐ
 February | Février
 Year 2 | Année 2
 No. 3 - 2018

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

ՄԵԾ ՊԱՀԸՐ՝ ԱՌԻԹ ՄԵՂԵՐՈՒԻ ԽԱՓԱՆՄԱՆ

Ինչո՞ւ Մեծ Պահքը

Մեծ Պահք... օրեր՝ որոնք մասնաւոր արժէք եւ իմաստ ունին իւրաքանչիւր քրիստոնէայ հաւատացեալի համար: Մեծ Պահքը բոլոր ժամանակներուն, անցեալին եւ այսօր, նոյն արժէքը ներկայացնող եկեղեցական գեղեցիկ կարգադրութիւն մըն է: Մարդու ստեղծագործութեան առաջին օրէն հասատուած կանոն մըն է. Աստուած երբ ստեղծեց մարդը, անոր բնութիւնը օժտեց խիստ պահեցողութեամբ եւ ստուա խստապահութեան առաջին պատուիրանը՝ չճաշակել փորձութեան ծառէն: Եթէ նախամարդը հնազանդ ըլլար աստուածային այս պատուիրանին, անպայման մեղքէ հեռու կէանք պիտի ապրէր:

Պատմութեան ընթացքին պահեցողները միշտ փրկուած են նեղութիւններէ, տառապանքներէ, բժշկուած են հիւանդութիւններէ եւ արժանացած են ավտուածային ներողամտութեան: Տակաւին նոյնիսկ մեր Տէրը երկնառաք վարդապետը, Իր սրբազան գործը, Իր տնօրինական կէանքը սկսելէ առաջ, Իր այնքան մաքուր եւ անմեղ մարմնով քառասնօրեայ ծոմապահութեան շրջան մը անցուց՝ մեզի օրինակ ըլլալու համար:

Այսօր եւս, Հայաստանեայց Առաքելական եկեղեցին իր հաւատացեալներուն կը թելադրէ պահեցողութիւն ընել, որ կը նշանակէ որոշ կերակուրներ գրկուիլ, իւրոտ կամ մսոտ կերակուրներ չուտել, շոքայութենէ եւ զեխութենէ հեռու մնալ: Մակայն, հիմնականին մէջ պահեցողութիւն կը նշանակէ ժուժկալութեամբ եւ առաքինի կէանքով խափանել մեղքը մեր կէանքէն:

Այսօր շատեր կրնան հարց տալ, թէ պահեցողութիւնը ի՞նչ կը փոխէ հաւատացեալի կէանքին մէջ:

Պահեցողութիւնը կը վերանորոգէ ու կը բարեկարգէ հաւատացեալին կէանքը, հոգեպէս միշտ արթուն կը պահէ, հաւատացեալին Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը կը սերտացնէ, խոնարհութիւն կը սորվեցնէ եւ մանաւանդ չարը կը վանէ: Անձնասիրութեան, փառասիրութեան եւ ընչաքաղցութեան ախտերէն կ'ազատէ, ցանկութիւններն ու կիրքերը կը մարէ եւ ժուժկալութեան կ'առաջնորդէ: Մէկ խօսքով, պահեցողը կը վայելէ Աստուծոյ ներկայութիւնը, կը դառնայ ընդունարանը Սրբութիւն Սրբոցի, որ հաճեցաւ խոնարհիլ՝ բարձրացնելու համար մարդը առ Աստուած:

Հետեւաբար, Մեծ Պահքը հոգեւոր ճամբորդութիւն մըն է, ուխտագնացութիւն մը, պատրաստութեան շրջան մըն է իւրաքանչիւր հաւատացեալի համար, հասնելու այն մեծ օրուան, յաղթանակի տօնակատարութեան, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Հրաշափառ Յարութեան:

Ընտրութիւնը մերն է այսօր, քալելու խաւարէն դէպի լոյս, մահէն դէպի կէանք, ապականութենէ դէպի անապականութիւն, անգիտութենէ դէպի գիտութիւն:

Քալէ՛նք այս ճանապարհէն եւ բարով հասնինք Ս. Յարութեան:



ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Շատեր կան, որոնք անծախ առաքինութիւնները լիովի կը կատարեն, պահք կը պահեն, կ'աղօթեն, ժուժկալ կ'ըլլան, բայց ի՞նչ օգուտ ունի այս բոլորը, երբ աղքատներուն նոյնիսկ մէկ դահեկանով իսկ չեն օգներ: Եթէ ողորմած չենք, միւսները ոչ մէկ օգուտ ունին, որովհետեւ միւս առաքինութիւնները ճրագներն են, իսկ ողորմութիւնը իւղն է՝ ճրագներու լուսաւորութեան պատճառը: Հետեւաբար, կարելի եղած չափով փութանք ողորմած ըլլալ ոչ միայն դրամով, այլ նաեւ խօսքերով եւ կարծիքներով, որովհետեւ քաղցր եւ մխիթարական խօսքերը նուազ ողորմութիւն չեն համարուիր:

Սարգիս Շնորհալի

ՃԻՇՏԸ ԳԻՏՆԱՆՔ

ՍՈՒՐԲ ՀՍԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Ս. Հաղորդութիւնը եկեղեցոյ ամենակարեւոր, կեղծանական խորհուրդն է: Քրիստոս ինք հաստատեց զայն վերջին ընթրիքի ժամանակ, երբ վերցուց հացն ու զինին, գոհացաւ եւ բաժնեց աշակերտներուն՝ ըսելով. «Առէ՛ք, կերէ՛ք, այս է իմ մարմինս», եւ «Խմեցէ՛ք ասկէ բոլորդ. ասիկա իմ նոր ուխտի արիւնս է, որ կը թափուի շատերուն վրայ մեղքերու քաւութեան եւ թողութեան համար»:

Առաքեալները հաւատացեալներուն հետ յաճախ կը հաւաքուէին ընթրիքի եւ կրկնելով Տիրոջ խօսքերը կը գոհանային Աստուծմէ, կ'օրհնէին հացն ու զինին եւ բոլորին կը հաղորդէին Քրիստոսի մարմինն ու արիւնը:

Սուրբ Հաղորդութեան միջոցով քրիստոնէաները բոլոր ժամանակներուն ոչ միայն կենդանի կը պահեն Փրկչին եւ անոր տնօրինութիւններու յիշատակը, այլեւ կը յարատեւեն Քրիստոսի հետ ներքին հաղորդակցութեամբ: Յարութիւն առած Աստուծոյ Որդին Հաղորդութեան միջոցով անտեսանելի կերպով կը միանայ մարդուն: Աստուածային արիւնը կը հոսի քրիստոնէայի երակներուն մէջ, կը սրբէ անոր հոգին ու մարմինը, կը մաքրէ բոլոր մեղքերէն եւ կը շնորհէ անձառելի երկնային երանութիւն: Առանց Ս. Հաղորդութեան մարդը չի կրնար ժառանգել երկնքի արքայութիւնը: Ուստի, մերժելով այս խորհուրդը, մարդը կը մերժէ եւ իր փրկութիւնը:

Հաղորդութեան խորհուրդը կը կատարուի եկեղեցոյ մէջ պատարագի ընթացքին, Ս. Խորանին վրայ, ուր հացն ու զինին Սուրբ Հոգիին զօրութեամբ Քրիստոսի ճշմարիտ մարմնին ու արեան կը փոխակերպուին: Հետեւաբար, ընդունելով Ս. Հաղորդութիւնը, մեր մէջ կ'ընդունինք զՔրիստոս ամբողջապէս՝ Իր աստուածութեամբ, մարդկային հոգիով ու մարմնով:

Հաղորդութեան պէտք է պատրաստուիլ արժանա-վայել կերպով, որպէսզի շնորհքի փոխարէն անիկա չդառնայ դատապարտութիւն: Հաղորդութեան պէտք է մօտենալ միայն ապաշխարութենէ ետք, երկիւղով եւ խոր հաւատքով:

ՀՈԳԵՒՈՐ ԱՏՈՐՈՒՄՆԵՐ



ՔՐԻՍՏՈՆԵՍԿԱՆ

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ

Այս տարի 18 Փետրուարը Մեծ Պահքի ոսկեշրթայ կիրակիներուն Արտաքսման Կիրակին է: Արտաքսել կը նշանակէ դուրս դնել եւ կամ վճարել: Մեր եկեղեցւոյ հայրերը մասնաւոր նպատակով մը այս կիրակիները անուանած են եւ կամ կապած՝ Աստուածաշունչի մէջ յիշուած պատմութիւններուն, դէպքերուն եւ եղելութիւններուն, որոնք մեզի համար խոյնումի եւ ինքնաքննութեան ազդակներ են: Որպէսզի մենք կարդանք այս դէպքերը, ճշմարտութիւնները եւ անոնցմէ հոգեւոր դաս եւ սնունդ ստանանք:

Հին կտակարանի Ծննդոց գիրքի 3-րդ գլխուն 22-րդ համարին մէջ հետեւեալը կը կարդանք. Եւ Տէր Աստուած ըսաւ. «Ահա Ադամ մեզմէ մէկուն պէս եղաւ բարին ու չարը գիտնալով, եւ հիմա պիտի չթուլատրեմ, որ ձեռքը երկնցնէ եւ կենաց ծառէն ալ առնէ եւ ուտէ ու յաւիտեան ապրի»: Ուստի Տէր Աստուած Եդեմի պարտէզէն դուրս դրաւ զանիկա:

Արտաքսման Կիրակին մեզի կը յիշեցնէ Մարդուն մեղանշումը եւ արտաքսումը դրախտէն, այսինքն ոչ պատկերաւոր իմաստով դուրս դրուիլ որոշ շրջանէ մը կամ պարտէզէ մը, այլ աւելին՝ մեղքը ճաշակելը եւ անոր աշխարհը մտնելը կը խորհրդանշէ:

Մարդը ճանչցաւ մեղք ըսուած եզրը, սահմանումը: Այլեւ անմեղ չէր մարդը մանուկի մը նման, այլ գիտակից դարձաւ մեղքին: «Պարտէզին մէջ քու ձայնդ լսեցի ու վախցայ, վասնզի մերկ էի ու պահուեցայ»: Հոն յիշեց, որ ինք մերկ է, այլապէս պէտք չունէր հագուստի: Ներսէս Ծնորհալի իր «Հաւատով խոստովանիմ» բանաստեղծական աղօթքին 3-րդ համարին մէջ շատ գեղեցիկ ձեւով կը պատկերէ այս մէկը ու կըսէ. «Ընկալ զիս որպէս զանառակ որդին. եւ զգեցո ինձ զպատմուճանն զառաջին՝ զոր մերկացայ մեղօք»:

Ահա թէ ինչո՞ւ Մեծ Պահքի այս շրջանը առիթ է, որ հին ուխտի հին մարդը վերանորոգուի նոր ուխտի նոր ադամով, առիթ է, որ մենք մեր հին պատմուճանը զգեստը, փոխարինենք նոր զգեստով ու պատմուճանով:

Մեր անձերը ինքնաքննութեան ենթարկելը, մեր անձերը զոյնումի, պահքի ու աղօթքի նուիրելը մեզ կը վերադարձնէ մեր երկնաւոր հօր, դրախտային նախախնամութեան, գթութեան ու ամենակարեւորը՝ հոգեւոր խաղաղութեան:

Պահքը զոյնումի ճամբով մեզ կ'առաջնորդէ սրբութեան, իսկ ճաշի պահեցողութիւնը մեզ կ'առաջնորդէ հոգեմտաւոր հաւասարակշռութեան, երկնաւոր երանութեան ու գոհունակութեան, ինչպէս պիտի ըսէր Ղուկաս Աւետարանիչ. «Ղկ. 14.12-24»

Վարդան Վրդ. Թաշճեան



ԿԿԱՅՈՒԹԻՒՆ

ԱՆԾԱՆՕԹ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ



Կին մը, երբ իր տունէն դուրս ելաւ, տեսաւ երեք մօրուքաւոր ձերուհիներ, որոնք նստած էին իր դրան դիմաց: Ան չճանչցաւ զանոնք, բայց ըսաւ. «Թէեւ անծանօթ էք ինձի, սակայն անօթի ըլլալու էք, խնդրեմ ներս հրամեցէք եւ բան մը կերէք»:

- Այդ տո՞ւնն է,- հարցուցին ձերմակ մօրուքով մարդիկը:
- Ո՛չ, - պատասխանեց կինը:- Ան դուրս գացած է:
- Ուրե՞սն ներս չենք կրնար գալ,- պատասխանեցին ձերուհիները:

Երեկոյեան երբ ամուսինը տուն եկաւ, կինը պատմեց պատահածը: «Գնա ըսէ, որ ես տունն եմ եւ զանոնք ներս հրաւիրէ», ըսաւ ամուսինը: Կինը դուրս ելաւ եւ անծանօթները ներս հրաւիրեց.

- Չենք կրնար միասին ներս մտնել,- ըսին հիւրերը:

Ծերունիներէն մին բարեկամներու դառնալով ըսաւ. «Ասոր անունը հարստութիւն է, իսկ միւսը յաջողութիւնն է, ես ալ սերն եմ», ապա աւելցուց. «Հիմա ներս մտիր եւ ամուսինիդ հետ խորհրդակցէ, թէ մեզմէ ո՞րը կ'ուզէք ունենալ»:

Կինը ներս վազեց եւ ամուսինին պատմեց լսածը: Մարդը չափազանց ուրախացաւ: «Ի՛նչ սքանչելի բան», ըսաւ: «Եթէ այդպէս է հարստութիւնը ներս հրաւիրէ, թող գայ եւ մեր տունը հարստութեամբ լեցնէ»: Կինը առարկեց ըսելով. «Միրելի ս, ինչո՞ւ յաջողութիւնը չհրաւիրենք»:

Այս գոյգին աղջնակը մտիկ կ'ընէր այս երկխօսութիւնը: Ան խօսակցութեան մէջ մտնելով թելադրեց. «Աւելի լաւ չ'ըլլա՞ր, որ սերը հրաւիրենք: Այն ատեն տունը սիրով պիտի լեցուի»:

«Մեր աղջկան խրատին հետեւի՛նք,- ըսաւ այրը կնկան:- Դուրս ելիր եւ սերը հրաւիրէ, որ մեր հիւրը ըլլայ»: Կինը դուրս ելաւ եւ հարցուց ձերուհիներուն. «Ձեզմէ ո՞ր մէկն է սերը, թող ան ներս հրամէ»:

Մերը ոտքի ելաւ եւ սկսաւ դէպի տունը յառաջանալ: Միւս երկուքն ալ հետեւեցան անոր: Չարմացած կինը հարցուց հարստութեան եւ յաջողութեան. «Ես միայն սերը հրաւիրեցի, դուք ինչո՞ւ ներս կու գաք»:

Մարդիկը միասնաբար պատասխանեցին. «Եթէ հարստութիւնը կամ յաջողութիւնը հրաւիրէք, միւս երկուքը դուրս պիտի մնային, բայց քանի որ սերը ընտրեցիք, ուր որ ան երթայ՝ մենք իրեն կ'ընկերակցինք: Ուր որ սեր կայ, հոն նաեւ կայ հարստութիւն եւ յաջողութիւն»:

Գեղեցիկ է ամէն շէնք, երբ սեր կայ տան մէջ: Չուարթ, սիրուն է ամէն դէմք, երբ սեր կայ տան մէջ: Հոն կայ քաղցր միութիւն, ճշմարիտ խաղաղութիւն, Իսկական յաջողութիւն, երբ սեր կայ տան մէջ:

Հրահաս

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԲԱՀԱՆԱՆԵՐ



Ամէն տարի ազգովին կը նշենք Վարդանանց սուրբերուն յիշատակը: Վարդանանք իրենց սրբազան անձերուն գոհագործութեամբ եւ խունկի անուշահոտութիւն ստացած իրենց արեան հեղումով երաշխատրեցին մեր անաղարտ հաւատքին եւ հայկազուն ազգին գոյատեւումը: Սակայն, Վարդանանց պատերազմը իր վերջակէտը չգտաւ Տղմուտ գետի ափին...:

Վարդանանց պատերազմէն ետք, պարսիկ Ատրորմիզ Մարգարանը դրդեց պարսից Յազկերտ թագաւորը, որպէսզի բանտարկէ հայ եկեղեցւոյ հոգեւորականներու դասը: Ան համոզեց թագաւորը, թէ անոնք էին պատերազմին ու հայ ժողովուրդին կռապաշտութիւն չընդունելուն պատճառը: Այդպէս ալ եղաւ. հայ հոգեւորականները բանտարկուեցան մոզապետի մը հսկողութեան տակ:

Արձանագրութեանց համաձայն, անոնց վրայ հսկող եւ զանազան առիթներով նախատող ու չարչարող մոզապետը ի վերջոյ դարձի կու գայ, երբ մի քանի առիթներով ականատես կ'ըլլայ պայծառ այն լոյսին, որ կը յայտնուէր, երբ քահանաները աղօթէին:

454-ին պարսից թագաւորը մեծ պարտութիւն մը կ'արձանագրէ, երբ կը պատերազմի քուշաններուն դէմ: շեթանոս մոզապետը պարտութեան պատճառը կը վերագրեն հայ եկեղեցականներուն եւ թագաւորին կ'ըսեն. «Արքայ, բանտին մէջ հայոց քաջ առաջնորդները քեզ կ'անիծեն անդադար. չաստուածները բարկացած են եւ չեն օգնէր քեզի, որովհետեւ մինչեւ այսօր անպատիժ թողած ես մեր աստուածները անարգողները»:


Թագաւորին հրամանով քահանաները կը սպաննուին եւ նահատակուելով կ'ընդունին մարտիրոսութեան պսակը:

Անոնք են՝ Յովսէփ Կաթողիկոս, Ղեւոնդ Երեց, Մուշէ Քահանայ, Արսէն Երեց եւ Քաջաջ Մարկաւազ:

Գարեգին Վրդ. Շիրումեան

ՇԵՍՏԱ

Հաւատով խոստովանիմ
Եւ երկիրպագանեմ Քեզ,
Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի,
Անեղ եւ անմահ բնութիւն,
Արարիչ հրեշտակաց եւ մարդկան
Եւ ամենայն եղելոց.
Եւ ողորմեա Քո արարածոց
Եւ ինձ բազմամեղիս:



ԻՆՏԵՐՆԵՏԻՆԵՐ



ՌԻՍԱԻՌԻՉ



MESSAGE DU PRÉLAT

Great Lent: an Opportunity to Subdue Sins

Why Great Lent?

Great Lent is a time of particular interest and value for every Christian. It is a beautiful series of regulations set by our Church in keeping the same worth as in the past. Since the first day of man's creation, God bestowed willpower upon him, and commanded him his first commandment: not to eat from the tree of knowledge. Had man followed this commandment, he would have a life far removed from sin.

Throughout history, those keeping Lent have been helped in times of need, through suffering, tribulation, and illness; they have been blessed by divine forgiveness. Even our Lord, before embarking on his Holy Journey, put His clean and sinless body through a forty-day period of fasting in order to set an example for his followers.

Even today, the Armenian Apostolic Church tells its believers to practice self-restraint, which means to abstain in some way from fatty foods and meat, from excesses and lavishness. However, this form of abstinence is merely a way to keep our lives free from sin.

Today, many may ask what is the point of abstinence in the life of a Christian.

Abstinence renews, improves, and strengthens a believer's relationship with God, while teaching him to be humble and, especially, to push away evil. It frees us from the blemishes of selfishness, vanity, greed, desires, and passions, and leads us to self-control. In sum, he who keeps Lent will revel in God's presence and become the receptacle of the Holy Sacrament, which will in turn lift him to His glory.

And so, Great Lent is a spiritual journey, a pilgrimage, a time of preparation for every Christian to one day be able to reach that great victory that is the Resurrection of our Lord Jesus Christ.

It is our choice to keep darkness away from the light, and to walk towards it; from death to life, from corruption to purity, from ignorance to knowledge. Let us walk this path and safely reach the Resurrection day.



Saint Vartan et ses compagnons martyrs, morts à la bataille d'Avarair contre les Perses (+ 451)

Faits prisonniers, ils furent massacrés au nombre de mille trente-sept par l'armée du shah de Perse le 2 juin 451 parce qu'ils refusèrent de se convertir à la religion du dieu soleil et de Zarathoustra. L'Eglise catholique romaine en fait mémoire le 2 juin.

Au moment où le concile de Chalcédoine défendait la foi des apôtres, saint Vartan et ses compagnons défendaient la foi et la liberté de l'Eglise contre l'invasion des Perses, adoreurs du soleil. Ils périrent tous dans la bataille d'Avarayr ou d'Avarair (en arménien Ավարայրի ճակատամարտ), mais ils sauvèrent la chrétienté arménienne et son Eglise apostolique.

L'Arménie était sous le joug des Perses qui voulaient imposer le religion de Zarathoustra. Les mages païens qui empêchaient la célébration des messes et renversaient les croix, furent reçus à coup de fourches. Devant cette attitude, le shah de Perse envoya une importante armée. Sous le commandement de Vartan Mamigonian, les Arméniens tentèrent de s'y opposer. Après avoir communié, ils partirent au combat, mais ils furent écrasés. L'Eglise les considère comme des martyrs.



Change Your Question to Overcome Temptation

"God blesses those who patiently endure testing and temptation." (James 1:12)

We all are tempted when it comes to doing or attaining things that are not permissible. When tempted, the first thought that comes to mind is: "It is not allowed." Hence, to avoid temptation, we create a filter in our minds asking ourselves, "Is it allowed?" This approach creates an inner battle within us.

Let's change the question. Instead of thinking in terms of permissible and not permissible, perhaps think in terms of healthy and unhealthy. Is it healthy to do or to have something that we are tempted with? By healthy, I mean physically, mentally, psychologically, spiritually, and relationally; that is in the wholistic sense of the term. I strongly believe that this approach equips you better to fight against temptation. In other words, whenever you are tempted with something, ask yourself: "How is this going to affect my physical and mental health?"; "How is it going to help me grow psychologically and spiritually?"; "How is it going to change my relationships with God, my family, friends, and loved ones?"

Changing the question will help bring the issue of temptation out of its "legal" perspective (permissible/ not permissible) and into a personal and relational level.

ՄԱՆԿԱՊԱՏՏԱՆԵԿԱՆ


Դու՛ն քու Բաժինդ Ըրէ

Օր մը երկու աղջիկներ դպրոց կ'երթային: Սովորականին չափ կանուխ չէին ելած եւ կը վախնային, թէ պիտի ուշանան: Անոնք հաւատացեալ էին, ուստի անոնցմէ մին ըսաւ. «Հոս կանգ առնենք եւ Աստուծէ խնդրենք, որ օգնէ, որպէսզի չուշանանք»: Սակայն, միւս աղջիկը ըսաւ. «Ո՛չ, կենալու տեղ ես կրցածիս չափ արագ պիտի վազեմ, բայց նոյն ատեն Աստուծմէ պիտի խնդրեմ, որ օգնէ, որպէսզի ճիշտ ժամանակին հասնիմ»:

Ո՞ր մէկ աղջիկը կը խորհիք, թէ շիտակ էր:

Երբեմն Տէրը կը գործածէ քեզ քու աղօթքներուդ պատասխանելու: Երբ կ'աղօթես եւ եթէ կայ բան մը, որ այդ առնչութեամբ կրնաս ընել, պէտք է ընես: Աստուած պիտի չընէ քեզի համար այն, ինչ որ դու՛ն կրնաս ընել:

Ամէն բանի համար աղօթել կը սորվի՞ս: Այդ ամէնէն ուրախ ապրելու կերպն է:



Գանատայի Հայոց Թեմի Կիրակնօրեայ Դպրոցներու նպատակն է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ դաւանութեան եւ աւանդութեան համաձայն՝ մեր մանուկներուն եւ պատանիներուն ջամբել կրօնական դաստիարակութիւն եւ եկեղեցւոյ վերաբերեալ գիտելիքներ եւ ծանօթութիւններ:



Ձեր զաւակները Կիրակնօրեայ Դպրոց արձանագրելու համար, կրնաք հեռաձայնել ձեր շրջանի եկեղեցիներու գրասենեակները:

Կիրակնօրեայ Դպրոցի ժամերն են՝ Կիրակի առաւօտները ժամը 10:30-1:00:



ՌԻՍՏԱՒՈՐԻՉ

ՃԱՆՉՆԱՆՔ

ԵԿԵՂԵՑ ԻՈՅ ՀԱՅՐԵՐԸ

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ 1102-1173

Ս. Ներսէս Շնորհալին հայ բազմաբեղուն ու բազմավաստակ մատենագիրներէն մէկն է, համաքրիստոնէական չափանիշով մեծ մատենագիր: Անոր մատենագրական ժառանգութիւնը գրեթէ անկորուստ հասած է մեզի: Իր գործերուն մեծ մասը տպագրուած է, թարգմանուած տասնեակ լեզուներու եւ բազմիցս վերահրատարակուած: Անոր բազմաժանր ստեղծագործութիւնները աստուածաբանական, դաւանական, մեկնողական, ծիսապաշտամունքային, պատմական, փիլիսոփայական, մանկավարժական բանաստեղծութիւնները, նամակները, քարոզները, աղօթքները եւ շարականները Կիլիկեան Հայաստանի պատմութեան առաջին շրջանի հոգեւոր-մշակութային մնայուն արժէքներէն են, ուր արտայայտուած են ժամանակի ազգային-քաղաքական տրամադրութիւնները, հայոց պետութեան եւ հայ եկեղեցւոյ գաղափարախօսութիւնը:

Ծնած է Հայոց Միջագետքի Տլուք գաւառի Ծովք դղեակին մէջ, հոր՝ իշխան Ապիրատ Պահլաւունիի ազնուական ընտանիքին մէջ: Ներսէս Շնորհալին, Գրիգոր Մագիստրոս Պահլաւունիի ծոռն է եւ Գրիգոր Գ. (Փոքր Վկայաւեր) Պահլաւունիի կրտսեր եղբայրը: Իր կրթութիւնը ստացած է Կարմիր վանքի դպրոցին մէջ եպիսկոպոս Ստեփանոս Մանուկի մօտ: 1166 թուականէն եղած է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Ան վախճանած է 1173 թուականին եւ թաղուած Հռոմկլա ամրոցին մէջ: Հայ եկեղեցին զինք դասած է սուրբերու շարքին եւ անոր յիշատակը կը նշէ ամէն տարի Թարգմանչաց տօնին:

Ներսէս Շնորհալիի մատենագրական վաստակը բաժնուած է երկու ընդունուած բաժիններու արձակ եւ չափածոյ: Շնորհալիի չափածոյ գրուածքներուն մէջ իր ուրոյն տեղը ունի «Հաւատով խոստովանիմ» նշանաւոր աղօթքը: Առաջին անգամ լոյս տեսած է 1616-ին, Լուովի մէջ, «Մաղմուսի Դաւիթ» գիրքին մէջ, ապա 1661-ին Ամսդերտամ «Կարճառօտ ժամագիրք» ժողովածոյին մէջ: Առանձին գիրքով առաջին անգամ հրատարակուած է Վենետիկ, 1690-ին:

«Հաւատով խոստովանիմ»ը համաշխարհային հոգեւոր գրականութեան գոհարներէն է (թարգմանուած 36 լեզուներու): Կը բաղկանայ 24 տուներէ (օրուան 24 ժամերուն համեմատ) եւ կը բովանդակէ աղօթքի բոլոր տեսակները (դաւանական, զոյճման, պաղատական, խոստովանական եւ այլն):

Մեծ սիրով եւ յարգանքով կը գրէ Շնորհալին հայ ազգային հերոսներու, հայրենաւեր թագաւորներու մասին. անոր ստեղծագործութեան միջուկը կը հանդիսանան հայրենասիրական մղումները եւ գաղափարները, իսկ հայրենիքի ազատումը առաջնահերթ խնդիրը:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԱՂՕԹՔԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ա) ՄԱՀՄԱՆՈՒՄ

Աղօթք բառով կը հասկնանք ձգտում մը, որուն միջոցով մարդ կը դիմէ Աստուծոյ, կամ պատկերաւոր բացատրութեամբ մը, ինչպէս Ներսէս Լամբրոնացի կ'ըսէ. «Շարժումս է այն չուանին, որուն ծայրը երկինքին մէջ գանգակ մը ունի կախուած»:

Աղօթքի ընթացքին կապ եւ յարաբերութիւն կը հաստատուի Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Քրիստոնէային պարտականութիւնն է իր սիրտին ու հոգիին խորերէն Աստուծոյ աղօթել: Ինչպէս Քրիստոս կ'ըսէ. «Մտի ր սենեակդ, գոցէ դուրը եւ ծածուկ կերպով աղօթէ քու երկնաւոր հօրդ» (Մտ 6.6): Այս խօսքով, մեր Տէրը Յիսուս Քրիստոս, մեզ կը հրաւիրէ անկեղծ եւ խոր յարաբերութիւն հաստատելու Աստուծոյ հետ:

Բ) ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԱՂՕԹԵԼ

Յիսուս իւրաքանչիւրիս կոչ կ'ուղղէ՝ թելադրելով մեր աղօթքները բխեցնել մեր սիրտին խորերէն: Եզնիկ Կողբացի կ'ըսէ. «Այն աղօթքը, որ սիրտէն կը բխի, Պատարագի փրկութիւն կը գործէ»: Ուրեմս, սրտաբուխ աղօթքը մեծ դեր ունի մեր կեանքին մէջ, նաեւ շաղկապ մըն է, որ Աստուած եւ մարդ իրարու կը կապէ:

Աղօթքը իր նպատակը ունի: Աղօթքին նպատակը այն է, որ մենք խաղաղ եւ հանգիստ խիղճ ունենանք, եւ առաքինի վարք ու բարքով երջանիկ կեանքի հետամուտ ըլլանք:

Կեանքը եւ աղօթքը իրարմէ անբաժանելի եւ զիրար լրացնող իրողութիւններ են: Առանց աղօթքի կեանքը մեռած է, եւ առանց կեանքի աղօթքը մեռած է: Աղօթքը մեր կեանքէն դուրս պէտք չէ ձգենք, որովհետեւ երբ աղօթքը մեկդի դնենք, զԱստուած մեկդի դրած կ'ըլլանք: Պէտք է մեր ամբողջ կեանքը աղօթք ըլլայ, իսկ աղօթքը կեանք, որովհետեւ «աղօթքը կը նմանի զոյգ ակերէ բխող գետի մը»: Կեանքը եւ աղօթքը անխոցելի կը դարձնեն եւ կը պաշտպանեն մեզ կեանքի հարուածներէն, եթէ աղօթքը կատարուի անկեղծ սիրտով եւ մաքուր հաւատով:

Իւրաքանչիւր անհատ ուզած ատեն կրնայ աղօթել, որովհետեւ Աստուծոյ համար ընդունելի են այն բոլոր աղօթքները, որոնք սիրտերու խորերէն կը բարձրանան: Աղօթքը հաւատքի արտայայտութեան միջոց մըն է: Երկու տեսակ աղօթք գոյութիւն ունի անհատական եւ ընդհանուր: Անհատական աղօթքը կը կոչուի նաեւ անձնական աղօթք, իսկ ընդհանրական աղօթքը կը կոչուի նաեւ հասարակաց աղօթք, որ կը կատարուի եկեղեցւոյ մէջ:

Շարունակելի 1
Յովհաննէս Վրդ. Մաղտրճեան

ՂԵՂՈՍԻՍՏՈՒՄԱՆ ԿԵՂԵՑՈՒՄ

Շաբաթ, 6 Յունուարին,



յընթացք Սուրբ Պատարագի, բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Ս. Բարգէն Արք. Զարեան, Գերապատի Ս. Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէկեան նշանակեց Առաջնորդական Փոխանորդ:



Շաբաթ, 20 Յունուարին,

հովանաւորութեամբ Գերաշնորհ Ս. Բարգէն Արք. Զարեանի, տեղի ունեցաւ ՈՄԿԱՆ ԵՐԵՒԱՆՅԻ-ի նուիրուած գիտաժողով եւ տեսանիւթի առաջին ներկայացում, նուիրուած՝ հայերէն առաջին տպագիր Աստուածաշունչի 350-ամեակին: Ձեռնարկի գիտական համադրողն էր պրն. Հրաչ Գասպար: Ֆիլմի բեմադրիչն է Յակոբ Փափագեան, իսկ ֆիլմարտադրողը՝ Նուէր Մնացականեան: Մոնթրէալի մէջ ֆիլմի ներկայացումը եւ գիտաժողովը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 10 Մարտին: Ձեռնարկի հովանաւորներն են տէր եւ տիկին Արթօ եւ Ալիս Մարգարեանները:



Շաբաթ, 6 Յունուարին,



յաւարտ Սուրբ Պատարագի, տեղի ունեցաւ Ս. Ծննդեան ճաշկերոյթ, հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Ս. Բարգէն Արք. Զարեանի: Ճաշկերոյթը անցաւ տօնական ջերմ մթնոլորտի մէջ, որուն ներկայ գտնուեցաւ նաեւ Թորոնթոյի քաղաքապետ Ճան Թորին, որ խօսք առնելով շնորհաւորեց հայ գաղութը եւ մեծապէս գնահատեց անոր ունեցած ներդրումը Մեծն Թորոնթոյի շրջանէն ներս: Առաջնորդ Սրբազան Հայրը, Ս. Ծննդեան առիթով, հայկական խաչ մը նուիրեց քաղաքապետին եւ շնորհաւորեց զայն՝ Նոր տարուան եւ Ս. Ծննդի առիթով:

Կիրակի, 21 Յունուարին,

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Ս. Բարգէն Արք. Զարեան հանդիսապէս եկեղեցւոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագը: Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, նոյն օրը, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ յընթացք Ս. Պատարագի ընթերցուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը:



ՓԵՏՐՈՒՄ 2018						
Կիրակի	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
				1	2	3
4	5	6 Ս. Նետիկեան	7	8 Ս. Կարդանանք	9	10
11 Բուն Բարեկենդան	12 Ա. օր Մեծի Պահոց	13	12 Տեսնորդարաց	15	16	17
14 Արտարամի Կիրակի	19	20	21	22	23	24
25 Ամառակի Կիրակի	26	27	28			

ՀՈԳԵՒՈՐ ԽՕՍՔ

Մարդ հաւատքով կարդարանայ, առանց օրէնքի գործերուն»: Յովհ. 3:28



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE & PHARMACY

PHARMACISTS
SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

**ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
 ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ**

**ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
 ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
 ՎԱՐՂԱՆ ՊԱԼԵԱՆ**

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մեջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետետողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղչ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցեք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
 Toronto, Ontario M1R 1V2 Tel : (416) 449-2040 Fax: (416) 449-2048



Annual Valentine's Ball

FEBRUARY 10, 2018

At the Chateau Royal Reception Hall
3500, boul. Du Souvenir, Chomedey, Laval

Կազմակերպությանը՝

Լալալի
Հայ
Կերրոնի



Մամուկցությունը՝

ԱՐՄԷՆՉԻԿ ԵՒ

Իր Նուագախումբին

Լուս Անճերուսէն

Մուտքի նուր

\$95.00

12 տարեկանին վար

փոքրերուն

\$50.00

VIP TABLES AVAILABLE

Տոմսերու համար
հեռաձայնել

Յասմիկ Պիլեմճեանին

(450) 682-5231

Վահան Վարդանեանին

(514) 804-1696

FIND US ON **FACEBOOK:**

ACC LAVAL






Ghadir
 Meat & Restaurant

Մեր յարգյալ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHA DIR մտափաճառատու են ու ճաշարանի փոխադրումը 1. առկի բնդարձակ և յարմարաւէտ կէտքոն ւր՝ նորագոյն եւ լաւագոյն ձևով ծառայելու մեր յաճախորդներուն:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արևելեան գանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մէնէիշ, պանիրով պէտրէկ, հաւու եւ կովու միսով շատրմա, հաւու եւ կովու միսով իտրոված, մաաշոթ, չի բօֆթ, լման հաւու խարոված, աւճալի եւ այլ տեսակի սղանդերներ:

ՆՈՐ ՀԱՍՅԷ՝
 1848 Lawrence Avenue East
 Scarborough, Ontario M1R 2Y4

ՀԵՌԱԶԱՅՆ՝
 (416) 750-7404 կամ (416) 750-7400





**Pharmacie
Levon Benohanian et
Mher Koubelian Inc.**
Pharmaciens-propriétaires

3915, Boulevard Samson
Laval, QC H7W 2G1



T 450 688-4111
F 450 681-5525
proximlaval@gmail.com

Lun. au vend. : 8h30 à 21h
Sam. et dim. : 9h à 17h
Infirmière (jeudi) : 8h30 à 15h



Անվճար սպասարկուքի ն մինչև ձեր տունը.
Շաբաթական դեղատուփիկի պատրաստութիւն.
Ազատ փոխադրում ձեր դեղացանկի (dossier)
այլ դեղարանէ. Դեղերու պատուաստում
(vaccination) հիւանդապահի կողմէ.

Բուժական հետեւում՝
արեան բարակութեան (INR), շնչերակային
ճնշման (tension artérielle), արեան շաքարի
(glycémie capillaire), արեան մաղձաճարպի
(cholesterol), եւն.

Manoir Gouin
Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

Résidence
Certifiée

À partir de **995\$** (après prêt)
Tous les repas, collations et supervision
médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մենք հոս ուրախ ենք
Պրն. Իրեւեան

1er mois gratuit pour tout bail signé avant le 28 février 2018

ՊԵՏԱՐԱԳ ՏԵՌԻ ԿՊԻԵՆԱԿ
ՍԵՐ ՀԱՆԳԱՏԵԱՆ ՏՈՒՆԷՆ ԱՆՐԱ:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

La madame
Tupperware®
Lady

Chouchan Ajemian
chouchanajemian@yahoo.ca

3710, 2^e Rue
Laval (QC)
H7V 1H8
(450)687-4860

7501, MB Jodoin
Anjou (QC)
H1J 2H9
(514)236-4860

ԱՅՍ ԱՆԿԻՒՆԷՆ Աղաղակող անհավասարություն

Մարդկության պատմությունը անհավասարություններու պատմություն մըն է: Որքան ալ ետ երթանք ժամանակին մէջ, անհավասարութեան երեւոյթը միշտ ալ կ'երեւի մարդկային յարաբերութիւններու ոտայնին մէջ: Նոյնիսկ կենդանական աշխարհին մէջ ընդհանրապէս:

Այդ երեւոյթն յառաջացած են «իրաւունքը զօրաւորին», «չամբերու օրէնքը» եւ նման ասոյթները: Միշտ ալ եղբր են ուժեղներ ու տկարներ, իշխողներ ու իշխուողներ, գերեզմաններ ու գերիններ, որսորդներ ու որսեր..., եւ այս՝ անհատական թէ հանրային կեանքին մէջ, առանձին մարդոց թէ հաւաքականութիւններու առնչութեամբ:

Լաւագոյն պարագային զօրաւորները տէ՛ր են եղբր տկարներուն, օգնէր, յոռեգոյն պարագային՝ հալածէր, շահագործէր, յօշոտէր եւ գանոնք, իրենց կա՛մքը պարտադրէր անոնց:

Մասնակի փորձեր են միայն այս կացութիւնը սրբագրելու եւ մարդավայել կեանք մը ապահովելու համար կատարուած բոլոր ճիգերը՝ իմացական շարժումները, կրօնները, յեղափոխութիւնները, մասնակի անոր համար, որ այդ ճիգերը յաճախ չեն արդիւնաւորուեր, անգամ հակառակը կատարէր են, աւելցնելով տիրողին ուժը եւ ազդեցութիւնը: Այսօր ալ կը շարունակուին այդ «ճիգեր»-ը, այդ գուցէ միշտ ապարդիւն ճիգերը:

Այս մտորումները կը յառաջանան ի տես վերջերս Զուլիցերիոյ Տաւոս քաղաքին մէջ տեղի ունեցած Համաշխարհային տնտեսական գաղաթնաժողովին, որուն մասնակցեցան 2000 անհատներ՝ աշխարհի ամենէն հարուստ ու ամենէն զօրեղներէն: Անոնց օրակարգին վրայ թէեւ կար նաեւ աղքատութեան վերացման խնդիրը, ինչպէս դիտել կու տայ Լը Տրփուարի բազմապատակ աշխատակիցը⁽¹⁾, անոնց նպատակը սակայն յաւելեալ տնտեսական յարաբերութիւններ հիւսել ու իրենց երկիրներուն եւ ընկերութիւններուն համար նոր շահեր ու շահարկումներ ապահովելն էր: Ինչ որ ինքնին դրական երեւոյթ է, սակայն չի մեղմացներ անհավասարութիւնները: «Մնացեալը խորհրդանշական է»- կ'աւելցնէ հրապարակագիրը: Արդարեւ, այդ բոլոր ձեռքբերումները պիտի ծառայեն խորացնելու եւ ընդլայնելու ունեւորներուն եւ չունեւորներուն միջեւ խրամատը:

Օքսֆամ միջազգային կազմակերպութիւնը⁽²⁾, ինչպէս ամեն տարի՝ Տաւոսի ժողովի նախօրեակին, կը հրապարակէ ընկերային անհավասարութիւններուն վերաբերեալ սահմակցուցիչ տեղեկութիւններ: Անցեալ տարի Օքսֆամ կը տեղեկացնէր, թէ աշխարհի ութ ամենէն ունեւոր անձերը, միա՛յն իրենք, ունէին այնքան հարստութիւն որքան աշխարհի բնակչութեան ամենէն աղքատ կէսը: Նոյնպէս, դիտել կը տրուէր, մարդկության ամենէն հարուստ 1%-ը ունէր այնքան զուտ հարստութիւն որքան մնացեալ 99%-ը: Իսկ այս տարի Օքսֆամ կը նշէ, թէ անցեալ տարուան ընթացքին ստեղծուած յաւելեալ հարստութեան 82%-ը նոյն այդ մէկ առ հարիւրն է ստացած, մինչ աշխարհի բնակչութեան այդ աղքատ կէսը՝ ոչ ի՛նչ:

Լը Տրփուարի մէկ այլ լրագրող⁽³⁾, քաղելով Bloomberg ֆինանսական գործակալութեան հրապարակումներէն, կը տեղեկացնէր վերջերս, թէ մեծ ընկերութիւններու կամ հաստատութիւններու ամենէն լաւ վարձատրուող ղեկավարները Գանատայի մէջ կը վաստակին աշխատաւորի միջին աշխատավարձին 149 անգամը, ինչ որ Գանատան կը դասէ 22 հարուստ երկիրներու շարքի 7-րդ աստիճանին վրայ: Զարմանալի չէ, ի հարկէ, որ այդ անհավասարութեան սանդղակին առաջին՝ ամենէն բարձր աստիճանը կը գրաւէ ԱՄՆ-ը, 265 բազմապատիկով, նկատի առնելով աշխատավարձը ու անոր ընկերացող առաւելութիւնները, ներառեալ հանգստեան թոշակին առնչուած բաժնետոմսերու պարգեւումները: Զարմանալի երկրորդ աստիճանը գրաւողն է՝ Հնդկաստանը (229 անգամ): Զինաստանը տասերորդ աստիճանին վրայ կը գտնուի ներկայիս (127 անգամ): Ամենէն վարի՝ 22-րդ աստիճանին վրայ գտնուելու պատիւը կ'երթայ Նորվեկիոյ (20 անգամ միայն), մինչ Շուէտը կը գրաւէ 18-րդ (60 անգամ), իսկ Ֆինլանտան 14-րդ (71 անգամ) տեղերը:

Այլ հրապարակումէ՛ս մը կը տեղեկանանք, թէ տարուան երկրորդ օրը՝ յունուար

2-ին, կ.ա. ժամը 11-ին երեք վայրկեան մնացած, Գանատայի ձեռնարկութիւններու ամենէն լաւ վարձատրուած ղեկավարները արդէն իսկ ստացած էին այնքան վճարում, որքան պիտի ստանար միջին աշխատաւորը ամբողջ տարին աշխատելով:

Տնտեսագէտները կը նշեն, որ անհավասարութիւնները հետզհետէ կը բազմապատուին: Մինչ վերին ղեկավարութեան վարձատրութիւնը 2016-ին 8% աւելցած է, միջին աշխատաւորինը միայն 0.5%, եւ սղաճն ալ նկատի առնելով՝ իսկութեան մէջ նուազած է իր գնման կարողութիւնը: Այդ հարուստները ա՛լ աւելի կը հարստանան սակարանի արժէքներու խաղերով, եւ ոչ անպայման իսկական արժէքներու յաւելումով, իսկ այդ խաղերը վարելը արդէն իրենց իսկ մասնագիտութիւնն է...

Այլընտրանքային քաղաքականութիւններու գանատական կեդրոնը⁽⁵⁾ կը պահանջէ հարկային հիմնական բարեփոխում մը, նուազեցնելու համար այդ տեսակի անհավասարութիւնները: Այս վերջինները, իրենց իրական արժէքէն զատ ունին նաեւ խորհրդանշական իմաստ՝ պետերու աշխատանքին ու աշխատաւորներու աշխատանքին արժէքային տեսակէտէն, տանելով սեփական քրտինքով վաստակի հասկացութեան արժեզրկման:

Սանֆասոն Լը Տրփուարի վերոյիշեալ իր խմբագրական ակնարկը կ'եզրակացնէ մէջբերելով Օքսֆամի ընդհանուր տնօրէնուհի Winnie Byanyima-ի դիտումը, թէ «Դժուար է գտնել քաղաքական պատասխանատու դէմքեր ու ձեռնարկութիւններու պետեր, որոնք մտահոգուած չըլլան անհավասարութիւններով: Աւելի դժուար է գտնել անոնցմէ այնպիսիներ, որոնք պատրաստ են այդ անհավասարութիւններուն դէմ պայքարելու համար քայլ մը առնելու»: Հրապարակագիրը կ'աւելցնէ, թէ, ընդհակառակն, բոլորը, նոյնիսկ Գանատայի ազատական կառավարութիւնը, ամեն ինչ կ'ընեն մրցակցութիւնը աւելցնելու եւ հարուստներու սուրբերը նուազեցնելու համար՝ նոր գրամագլուխներ ներդրուելու յոյսով, բայց միաժամանակ կրճատելով ընկերային սպասարկութիւնները, որոնց այնքան կարիքը ունի ժողովուրդը:

Ի հարկէ այս երեւոյթները յատուկ չեն միայն այսպէս կոչուած զարգացած երկիրներուն: Աշխարհի երկիրներու մեծամասնութիւնը, ուր տիրողները բռնապետեր են, սակաւապետեր ու յանցապետեր, կացութիւնը աւելի լաւ չէ, ընդհակառակն:

Ի՛նչ են հետեւանքները այս բոլորին:

Կ'աւելնան յուսահատական արարքները, անձնասպանութիւններն ու ոճիրները, ահաբեկչական արարքները, գողութիւնները, հիւանդութիւններն ու մասամբ նորին: Կ'ընդլայնի սեւ շուկան, եւ հետեւելով ունեւորներու օրինակին՝ նուազ ունեւորներն ու չունեւորներն ալ կը ջանան խուսափիլ իրենց հարկերը վճարելէ: Կառավարութիւնները այս խտտերուն դէմ կը պայքարին իրենց նուազող տնտեսական միջոցներով, միջոցներ որոնք կը ստեղծուին առաւելաբար միջին դասակարգի օրինապահ քաղաքացիներու քրտինքով: միշտ գեղջելով ուսման, գիտութեան, առողջապահութեան, մշակոյթի եւ այլ ընկերային մարզերու յատկացուելիք գումարներէն: Դեռ չեմ նշեր բնութեան հասցուած չարիքները:

Այո՛, միշտ ալ եղած են անհավասարութիւններ, բայց այսքան բացայայտ, համատարած ու աղաղակող...»

ՎԻԷԺ-ԱՐՄԷՆ

1. Jean-Robert Sansfaçon, *Inégalités sociales – La fracture s'accroît*, Le Devoir, page éditoriale, 2018-01-23
2. Oxfam International (initially Oxford Committee for Famine Relief)
3. Gérard Bérubé, *Les grands patrons gagnent 149 fois le salaire moyen*, Le Devoir, 2017-12-29
4. Roxanne Ocampo, (La Presse canadienne), *Les grands dirigeants du pays ont déjà gagné l'équivalent du salaire annuel moyen*, Le Devoir, 2018-01-03
5. Centre canadien de politiques alternatives

Ghadir Meat & Restaurant
 T. 416-750-7404
 T. 416-750-7400
 1848 Lawrence Avenue E.
 Scarborough, ON M1R 2Y4
 E-mail: info@ghadirmeatmarket.com

ANNI BAKERY
 AND FINE FOODS
 SINCE 1991
 OPEN 7 DAYS A WEEK!
 WEEKDAYS 9am - 7pm
 SATURDAY 6AM - 6PM
 SUNDAY 9AM - 3PM
 LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
 ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
 Gourmet Mediterranean Cuisine
 1 High Meadow Place, Unit 9
 Toronto, Ontario M9L 2Z5
 Tel 416 745 3111
 Fax 416 745 9337

ANI Restaurant
 905.761.6484
 1450 Clark Ave. West,
 Thornhill ON L4J 7R5

Sutton
 Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0
Annie Varbedian
 Sales Representative
 Direct: (416) 918-3615
 Office: (416) 739-7200
 Fax: (416) 739-9367
 annievarbed@hotmial.com
 www.suttongroupadmiral.com

hearing aid source
Andre Ayvazyan HIS B.A.S.
 andre@HearingAidSource.ca
 416 754 4327 (HEAR)
 Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
 Fine Middle Eastern Pastries
 2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
 Toronto ON, M1R 2Z5
 Tel 647.351.2015
 www.crownpastriesbaklava.com

I.D.A.
 Part of the **Royal** family of pharmacies.
Cassandra Pharmacy Inc.
 2040 Victoria Park Ave.
 Toronto, Ontario
 M1R 1V2
 Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian
 Tel. : 416.449.2040
 Fax: 416.449.2048

ANI BAKERY
 ԱՆԻ ՓՈԱՊԱՆ
Middle Eastern Pizza
Lahmajoun
ARSEN DABBAGHIAN
 25 Howden Road, Unit #2
 Scarborough, Ontario M1R 3C8
 Tel: 416.285.7164

ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒԱԿԱՆՆԵՐ

ՀՄԸՄ Գանատա - 100 ամեակ
Օնթարիո եւ Քեպեկ
 23 կամ 25 նոյեմբեր 2018

ՄՐՆԹՐԷԱԼ

Համազգայինի 90-ամեակի հանդիսություն
 14 Հոկտեմբեր 2018 - Կը խնդրուի չխաչածել

ՑԱԻԱԿՑԱԿԱՆ

ՀՅԳ Գանատայի Կեդրոնական կոմիտեն եւ Գանատայի Հայ Դատի Շրջանային յանձնախումբը խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնեն ընկ. Սեւակ եւ ընկ. Միսաֆ Պելեաններուն՝ իրենց մօր ՍԱԼԲԻ ՊԷԼԵԱՆԻ մահուան տխուր առիթով:

Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերազնորհ Տ. Բարգէն Արք. Զարեան, Թեմի Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը, հոգեւորականաց դասն ու Հոգաբարձական կազմերը, Ազգային Երեսփոխաններն ու Պատգամաւորները, խորին ցաւակցութիւն կը յայտնեն պրն. Սեւակ Պելեանին եւ իր ընտանիքի անդամներուն, **ՍԱԼԲԻ ՊԷԼԵԱՆԻ** մահուան տխուր առիթով: Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Դիւան Ազգային Առաջնորդարանի

Սենդ Գաբրիելի Հայ Կեդրոնի անդամները ցաւակցութիւն կը յայտնեն Միսաֆ եւ Սեւակ Պելեաններուն, տիկին Նուարդ եւ պրն. Հանօ Սեֆեմեաններուն, իրենց մօր, հարազատին եւ գաղութի սիրուած անդամ **ՍԱԼԲԻ ՊԷԼԵԱՆԻ** վաղաժամ մահուան առիթով:

ՀՅԳ ԳԵՄ-ի կեդրոնական վարչութիւնը իր բոլոր մասնակիցներով, ցաւակցութիւն կը յայտնեն ընկ. Սեւակ Պելեանին, իր մօր՝ **ՍԱԼԲԻ ՊԷԼԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:

Հայ Օգնութեան Միութեան Գանատայի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ մահը Սեմ-Գաբրիելի «Արագ» մասնակիցի վարչութեան փոխատենապետ ընկհ. **ՍԱԼԲԻ ՊԷԼԵԱՆԻ**:

ՀՄ-ի Շրջանային Վարչութիւնը եւ համայն ՀՄ-ի ընտանիքը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն զաւակներուն Սեւակ եւ Միսաֆ Պելեաններուն, հանգուցեալին մօր՝ ընկհ. Նուարդ Սեֆեմեանին եւ երբօր ժանօ Սեֆեմեանին, իրենց սիրեցեալ մօր, զաւկին եւ քրոջ վաղաժամ կորուստին համար:

ՀՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնէ վարչական ընկ. Անի Գրախանին եւ իր ընտանեկան պարագաներուն, իր հօրեղբորդոյն **ՅԱԿՈՒ ԶՈՒՐԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:

ՀՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ ընկհ. Մարալ Միսիրեանին, իր հօր **ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕԶԱՆԷՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ողբ. **ՎԱԶԳԷՆ ՄԱԼՈՅԵԱՆԻ** մահուան քաղաքացիական արարիւն, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Փետրուար 2018, Ս. Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Սգակիրներ՝ տիկին Այտա Կարիկեան-Մալոյեան եւ ընտանիք, Մալոյեան, Գալայեան, Թերզեան, Կիւլեզեան, Էֆրեան եւ Գարրիելեան ընտանիքներ:



ԺՈՂՈՎՆԵՐ

ՀՄ-ի ՄՐՆԹՐԷԱԼԻ «ՍՕՍԷ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 6 Փետրուար 2018-ին: Երեկոյեան ժամը 7:30ին հիւրասիրութիւն, 8:00-ին՝ ժողով:

ՀՄ-ի ԼԱԻԱԼԻ «ՇՈՒՇԻ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Զորեքշաբթի, 7 Փետրուար 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Հայ կեդրոն:

ՀՄ-ի ԹՈՐՈՆՏՈՑԻ «ՌՈՒԲԻՆԱ» ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ. Երեքշաբթի, 6 Փետրուար 2018-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Թորոնթոյի Հայ կեդրոն:

Այցելեցէ՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website
www.arsarmenianschool.ca

3400 rue Nadon
 Montréal, QC
 H4J 1P5
 (514) 549-0416
 (514) 332-1373 poste 6

Թափուր աշխատատեղ

Սուրբ Յակոբ եկեղեցւոյ «Դրօ եւ Աննա Փիլիկեան» Շաբաթօրեայ վարժարանը կը յայտարարէ, թէ կարիք ունի հետեւեալ առարկաներու պատմութեան, հայոց լեզուի/հայ գրակ. եւ արուեստի ուսուցիչներու.

ՊԱՇՏՈՆ
 *Ուսուցիչ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ
 *Առարկայի դասաւանդում
 *Առարկայական ծրագրի կազմութիւն եւ իրականացում

ԿԸ ՊԱՀԱՆՁՈՒԻ
 *Մասնագիտութեան համապատասխան բարձրագոյն կրթութիւն
 *Առնուազն հինգ տարուան ուսուցչական փորձառութիւն
 *Առարկայի դասաւանդման եւ գնահատման մեթոտաբանութեան իմացութիւն
 *Համակարգիչի իմացութիւն (word, excell, powerpoint)

ՅԱԻԵԼԵԱԼ ՀՏՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
 *Համագործակցաբար աշխատելու կարողութիւն
 *Մտեղծագործական եւ վերլուծական մտածողութիւն, ինքնակառավարման կարողութիւն
 *Աշխատանքի որակի համար առաւելագոյն պատասխանատուութիւն եւ հոգատար վերաբերմունք աշակերտներուն հանդէպ
 *Իրաքանչիւր տարիքային խումբի երեխաներու հետ աշխատելու համար համապատասխան անհրաժեշտ հմտութիւններ
 *Մասնագիտական փորձառութիւնը շարունակաբար կատարելագործելու պատրաստակամութիւն

Հետաքրքրուողներէն կը խնդրուի դիմել հետեւեալ ե-հասցէին direction@ecoledusamedisourphagop.com կցելով ինքնակենսագրութիւն (CV) եւ համառօտ ուղեկցող նամակ

ALINE BEKEREJIAN
 NOTAIRE • NOTARY
ՆՈՏԱՐ ԱԿԻՆ ՊԵՔԵՐԵՃԵԱՆ

Achat	Ստեղծութիւն	Purchase
Hypothèque	Անշարժ Կալուածք	Mortgage
Refinancement	Վերաֆինանսատրում	Refinance
Mandat	Պատուիր	Mandate
Testament	Կտակ	Will
Succession	Կալուածք	Estate
Marriage	Ամուսնութիւն	Marriage
Procuratoin	Փոխաւորութիւն	Power of Attorney

180, rue Fleury ouest
 Montréal, Qc, H3L1T5
 T 514.382.7222
 F 514.381.1818
 aline.b@notarius.net
 www.abnotaires.com

Շաաայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Գայերէն, Ֆրանսերէն, եւ Սեպերէն լեզուներով:

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais
 Services offered in Arabic, Armenian, French and English.

horizon
HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
 Publié par / Published by
Les Publications Arméniennes
 (1991)
 3401, Olivar-Asselin
 Montréal, Québec
 Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription
 Canada
 2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
 1^{re} classe - 1st class: \$95
États-Unis / USA
 1^{re} classe - 1st class: \$95 US
Ailleurs / Elsewhere
 1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
 Sylva Eshramdjian-Bachekjian
(General Manager)
 Tél.: (514) 332-3757
 Télécopieur/Fax (514) 332-4870
 E-Mail: sylvia@horizonweekly.ca
 Courrier de deuxième classe
 /No. 40065294 / Second class mail
 Dépot légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Վարիչ Խմբագիր
 Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու
 Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ Խմբագիր
 Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեաւտրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնա Թիթիկեան

Թորոնթոյի
 Ներկայացուցիչներ՝
 Գրիգոր Հորոյեան, (416) 494-1921
 Ժագ Վարպետեան, (416) 722-9225

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Վազգէն Տէկիրմէնքաչ

Financé par le
 gouvernement
 du Canada
 Funded by the
 Government
 of Canada

Canada



Innovate
pour exalter

GRUPE NISSAN
GABRIEL



NISSAN
ROGUE^{MD}
2018

PARTEZ POUR UNE NOUVELLE AVENTURE
Avec sa puissance nerveuse, son adaptabilité
instantanée et ses technologies de conduite
dynamique, le rogue sera toujours prêt à tout.

À partir de **26 148 \$***

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantalon.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

◀ **OUVERT LES SAMEDIS** ▶

*Des conditions s'appliquent. Taxes en sus. Offre d'une durée limitée et applicable uniquement sur les modèles sélectionnés et sujettes à changements ou annulation sans préavis. Visitez votre concessionnaire Nissan Gabriel Jean Talon ou Nissan Gabriel Anjou pour les détails.



BARRY



KAREN



GARO

KAZANDJIAN



825 Avenue McEachran, Outremont

RÉCEMMENT
VENDU 579 000 \$

2233 Rue Du Chinook, Saint Laurent

RÉCEMMENT
VENDU 999 000 \$

514
333-3000
DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

180 Avenue Morrison, Mont-Royal

RÉCEMMENT
VENDU 2 999 000 \$

5819 Tommy-Douglas, Côte-Saint-Luc

RÉCEMMENT
VENDU 999 900 \$

Lot on Boul. Gouin O., Ahuntsic

RÉCEMMENT
VENDU 799 000 \$

8100 Av. Jean-Bourdon, Ahuntsic

RÉCEMMENT
VENDU 1 899 000 \$

1189 Ch. Lucerne, Mont-Royal

RÉCEMMENT
VENDU 699 000 \$

131 Ch. Bates, Mont Royal

PROJET DE CONDO
VENDU 100%

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

CLASSÉS PARMI LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5